ЕРГОРСПРАВКА-ЕРГОРСОВЕТА
ОТДЕЛ ГАЗЕТНО-ЖУРНАЛЬНЫХ ВЫРЕЗОК
140
Вырезка Ер. Գրական
Սեպ. Բա
от "" 8/12 1939 г.

◆ ՄԵԾԱՐՈՒՄՆԵՐ

ԵՐԿԱՐԱՏԵՎ ԸՆԴՄԻՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Ավետիք Իսահակյանի ծննդյան 114-րդ տարելիցին նվիրված հուշերեկոն անցկացվեց Վարպետի տուն-թանգարանում, որը երկարատև ընդմիջումից հետո կրկին իր հյուրընկալ հարկի տակ ընդունեց այցելուներին: Տուն-թանգարանը երկար ժամանակ վերանորոգվում էր: Վարպետի պոեզիայի երկրպագուների համար հարազատ մասունքներ դարձած իրերը, որոնք ուղեկցել են բանաստեղծին նրա երկարատև ստեղծագործական կյանքի ընթացքում, կրկին տեղ գտան ցուցավահանակներում:

Հուշ-երեկոն ներածական խոսքով բացեց տուն-թանգարանի տնօրեն Հ. Մելքոնյանը: Նա ողջունեց երեկոյի բազմաթիվ մասնակիցներին Վարպետի նորոգ հարկի տակ:

Ավետիք Իսահակյանի կյանքի ու ստեղծագործության մասին հակիրճ խոսք ասաց բանաստեղծի թոռը՝ բանասիրական գիտությունների դոկտոր Ավիկ Իսահակյանը:

Վարպետի մասին հուշեր պատմեցին պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Բարսեղյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Հովնանը, գրող Գ. Հայրյանը, հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանը:

Հարուստ ծրագիր ուներ հուշերեկոյի գեղարվեստական բաժինը: Ավետիք Իսահակյանի բանաստեղծություններից արտասանեցին համամիութենական մրցույթի դափնեկիր Ս. Գաբրիելյանը, հանրապետության ժողովրդական արտիստ Վլ. Աբաջյանը, ասմունքողներ Ս. Յուզբաշյանը, Լ. Մնացականյանը: Հանրապետության ժողովրդական արտիստ Օֆ. Համբարձումյանը կատարեց բանաստեղծի տեքստերով գրված երգեր:

Դուդուկահար, համաշխարհային երիտասարդական փառատոնի դափնեկիր Ս. Դանիելյանը Ռ. Առաքելյանի նվագակցությամբ կատարեց Վարպետի տեքստերով գրված ժողովրդական մեղեդիներ:

Ավետիք Իսահակյանի ծննդյան տարելիցին նվիրված հուշ-երեկոն հարգանքի տուրք էր մեծ բանաստեղծի հիշատակին, որի ստեղծագործական արարումը մեր ժողովրդի ոգու անգին հարստությունն է:

ՀՐ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ